«Յամին 1417, Պարսիկ ոմն Յուսուփ անուն ի Դավրէժ քաղաքէ թշնամի Քրիստոնէից ի մանկութենէ. տեսեալ յանուրջս զհաւատս տեառն Քրիստոսի, և զի սպառնալիք տանջանաց ի վերայ նորա կային, եթէ կացցէ ի նմին անհաւատութեան. զարհուրեցաւ յոյժ, և զարթուցեալ ի քնոյն գնաց առ Ստեփաննոս վարդապետ Լալուկ անուանեալ[1]) և Մկրտեալ ի նմանէ կոչեցաւ Սահակ։ Զայս իմացեալ Պարսից կալան զնա և յետ բազում զառն տանջանաց քարկոծեալ՝ այրեցին հրով զմարմին սրբոյն և ծագեաց լոյս սաստիկ ի նմին գիշերի»։

Իսկ Յայտնութիւնքն մեր ի 18ն ապրիլի, այսպէս պատմէ. «Ամսեկի ԺԱ. և ապրիլի ԺԸ. ՊԿԶ. (1417 ամի Տեառն) վկայութիւն սրբոյն Սահակայ Նահատակ վարդապետի։

«Սա էր ի մայրաքաղաքէն Զահաստանայ, այս է ի Թարվիզոյ՝ ազգաւ Պարսիկ և հաւատովն տաճիկ, անուամբ Յուսուփ՝ յոյժ չարաբարոյ և ժանդ՝ ի տիս մանկութեան՝ վայրագնաց և յանդուգն՝ հալածիչ Քրիստոնէից, ոչ ունելով բնաւ պակասութիւն չարեաց, այլ բոլորովին կամարար սատանայի և արբանեկաց նորա։

«Եւ յաւուր միում երևեցաւ նմա Քրիստոս, ի տեսլեան՝ նստեալ յատեան, զարհուրեցաւ և զերիս աւուրս որպէս մեռեալ անկաւ յերկիր Յուսուփն այն։

«Եւ ապա ուշաբերեալ զարթեաւ և պատմեաց հօրն իւրոյ և եղբարցն զտեսիլն և ասաց, թէ ճշմարիտ Քրիստոս Աստուած է և որդի Աստուծոյ։

«Եւ երթեալ առ քահանայսն Հայոց՝ պատմեաց նոցա և մկրտեցաւ (ի վանս սուրբ Ստեփաննոս Նախավկայի Զամբայ.) և փութով ուսաւ զգիրն Հայոց ի շնորհացն Աստուծոյ, գիտէր և զտաճկաց գիրսն և էր յոյժ արագամիտ։ Մինչ զի մեկնէր զամենայն գիրս Աստուածային Հին և Նոր Կտակարանաց։

«Էր և կարի տրամաբանող ընդ պարսից, և ընդ երկաբնակ հերձուածողացն։ Եւ փոյթ ի պատասխանիսն, ուղղա-

---

[1]) Անանդութեամբ ասի ի վանս Զամբայ Ս. Նախավկայի, որ ի Մաղարդայ լերին։